ԺԵ.

Ցիշեցինք արդէն, թէ Մամիկոնեանց կալուածներում այլ ևս երկու Ամենափրկիչ կոչուած խաչարձաններ կան. դոցանից մէկը նրանց կեդրոնական աւանում, Դսեղի մէջ, հին գերեզմանատանը (պարկ. 41)։ Խաչարձանը բարձրանում է երեք մեծ, իրար վերայ դրուած քարերով պատուանդանի վերայ. ներքևի քարերը սև են, իսկ վերևինը, որի վերայ խաչն է հաստատուած, կարմրաւուն. նոյն գոյնն ունի և բուն խաչարձանը։ Պատուանդանի վերևի քարի երեսին իրար յետևից շարքով քանդակուած են չորս պարզ խաչեր, իսկ նրանց տակը հետևեալ արձանագրութիւնը.

1. Ի թվ. ՉԼ (= 1281).
2. Ողորմութիւն ՀՍ ես Տէրունս որդի
   Խալբլին իմ եղբէրացովս
3. կանկնեցի զ
4. էչս (պակասում է խ) յանուն Գրիգորս
   որ զուր եւ մահս
5. ւամբ ի քՀ փոխեցաւ որ էր պարծ (1)
6. անաց . . . մեր որք երկրպագէք
7. յաղաւթս յիշեցէք

Խաչի պատուանդանի վերայ՝ հիւսիսային կողմը գրուած է «Վարհամ յիշեցէք», որ քարգործն է, իսկ Գրիգորը, որի անունով Խալբլի որդի Տերունը իւր եղբայրներով կանգնել է այս արձանը, ամենայն հաւանականութեամբ, Գրիգոր Մամիկոնեանն է, Մամիկոնի հայրը և Մարծպանի որդին։

Խմբաքանդակի կեդրոնը այստեղ ևս, բնականաբար, բուն խաչելութիւնն է, խաչափայտի վերին և հորիզոնական թևերի ծայրերը կրկնախաչ. Յիսուս գլուխը թեքել է դէպի մայրը, որ կանգնած է աջ կողմից և երկու ձեռքով բռնել է որդու խաչից պոկուած ձեռքը և համբուրում է։ Խաչեցեալի լուսոյ պսակը մակերևոյթից փոքր ինչ դուրս է ընկած, նոյնը և Մարիամինը, որի վերայ գրուած է «ՀՍծածին»։ Յիսուս մերկ է, ամօթանքը միայն ծածկուած մինչեւ ծնկները, ոտներն իրար կողքի դամուած և դէպի աջ ուղղուած. իսկ Մարիամ գլխին լաչակ է ձգել, որ անցնում է պարանոցի տակով և ծալքերով իջնում ուսերին. վերան ձգել է կարճ վերնազգեստ, իսկ նորա տակից մինչև ոտները հասնող վերնաչապիկ։ Մարիամի հանդիպակաց կողմը «Յովհաննէս»ն է, ինչպէս և գրուած է լուսոյ պսակի վերայ. նա աջը դրել է ծնոտին, իսկ ձախը կրծքին. դէմքը կլոր, առանց մորուքի, քիչ եղծուած. գլխի մազերը թափուած ուսերին։ Վերնազգեստը ծալքաւոր, և հասնում է մինչև սրաքիթ կոշիկ հագած ոտները։ Սրանից ցած ծունկ է չոքել Նիկոդիմոս, նիմբուսի ելնդաւոր վերտառութեան համեմատ, ունելիքը մեկնել է Յիսուսի ոտքից բևեռը հանելու համար. ունելիքի մասը քիչ կոտրուած։ Միւս կողմը՝ Մարիամից ցած՝ «Յովսէփ»ն է ըստ նիմբուսի գրութեան, ձեռքերը մեկնած աղաչաւորի ձևով և գլուխը վեր բարձրացրած, գօտին՝ մինչև ծնկների գլուխը հասնող՝ կապայի վերայից։ Խաչի պատուանդանի տակ, որ Գողգոթան է և եռամասերով ձևացրած, նկատւում է «Ադամ»ի գլուխը։ Խաչելութեան գլխին դրուած է ցուցանակ–տախտակը, վերան ելնդաւոր տառերով «սայ է թագաւ/որ հրէից» գրուած։ Ցուցանակի տակից «աջ ՀՍն» խաչակնքում է, ձախ անկիւնից դէպի աջ մեկնուած, իսկ նորա մօտ աղաւնակերպ հոգին՝ «հոգի ՀՍյ» գրուած. հորիզոնական թևերի վերայ խորաքանդակ գրերով. «ձեռք որ զե/րկինս ար ար ին տարածեցե/ր ի խաչիս»։

Խաչքարի ճակատին՝ կեդրոնում Ամենակալի անդրին է սկաւառակի մէջ, աջով խաչակնքում է, իսկ ձախով մի ժապաւէն բռնել (բաց մագաղաթ) վերան «ես եմ լոյս աշխարհի» խոր քանդակուած։ Աջից երեւում է ճառագայթարձակ «արեգակ», ծաղկազարդի մէջ սիրուն գրուած, զարդարուն թևերով և պոչով թռչունի մէջքին. իսկ միւս կողմից «լուսին» մի կենդանու, թըւում է մէջքը չորով ծածկուած եղի վերայ։

Խաչի ֆոնն ամբողջապէս ելնդաւոր արմաւենիկի և ցօղունների զարդարանք է, իսկ վերևի ճակատը եռագիծ հիւսուածքի մի ժապաւէն։

(1) Երրորդ, հինգերորդ եւ եօթերորդ տողերը գրուած են պատուանդանի հարաւային երեսին։